Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5
1-11

0 4 MAY 2010

5
Ս-11

2.

Ս. Ս.

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ

ԶՐՈՅՑՆԵՐ

№ 1.

ՑԱՌԱՋԱԲԱՆ.

ԲԱԿՈՒ.
Տպարան Յ. Գ. Գիլբաթարեանի.
1902.

W 729 5/Ս-11
13 MAY 2005
530/96-Ա

Ս. Ա.

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ

ԶՐՈՅՑՆԵՐ

№ I.

ՑԱՌԱՋԱԲԱՆ.

ԲԱԳՈՒ.
Տպարան Յ. Գ. Գիլբասարեանի.
1902.

25 JUL 2013

188

Дозволено Цензурою 20 февраля 1902 г., Тифлисъ.

9653

Մենք դրուած ենք այս աշխարհի մէջ, և մեր կեանքը անց է կենում շարունակ ընդհարումների մէջ, այս աշխարհի հետ։

Ընդհարումների պատճառը գոյութեան խնդիրն է։

Օրինակ՝ մինչև որ մենք մեր սնունդի կարևոր հացը ստանանք, մենք պէտք է գետինը հերկենք, սերմենք, հնձենք և այլն։ Մինչև գութանի պատրաստելը, մենք պէտք է երկրից հանենք երկաթահանքը և նրանից դարբնենք գութանի երկաթի մասերը։ Պէտք է անտառից կըտրենք փայտը և շինենք նրա փայտի մասերը և այլն։ Մի խօսքով մեր գոյութեան պահպանութիւնը պահանջում է մեզանից, որ մենք մշտական ընդհարումների մէջ լինենք աշխարհի առարկաների հետ։

Այդ ընդհարումները հետզհետէ զարգացրել են մեր մէջ մեր գիտակցութիւնը։ Գիտակցութեան շնորհիւ մենք հետզհետէ սկսել ենք ծանօթանալ աշխարհի առարկաների և երևոյթների

հետ։ Քանի գիտակցութիւնը աւելի է զարգացել, այնքան էլ այդ ծանօթութիւնը խոր և հիմնաւոր է եղել, իսկ առարկաների և երևոյթների հիմնաւոր ծանօթութիւնը մեզ պարգևել է աւելի բարեկեցիկ կեանք։

Ուրեմն մարդու բարեկեցիկ կեանքը կախուած է առարկաների և երևոյթների հիմնաւոր ծանօթութիւնից։

Առարկաների և երևոյթների ծանօթութիւնը լինում է դիտողութեամբ և եզրակացութեամբ։

Գիւղացին հերկում է դաշտը արօրով։ Պատահում է, որ մի անգամ արօրի ծայրը աւելի երկար է լինում, քան սովորական արօրինը, և աւելի խորէ ակօսում երկիրը։ Հունձը վերայ հասնելու ժամանակ գիւղացին նկատում է, որ այս տարի հասկերը աւելի լիքն են և ծղօտները աւելի երկար, չը նայելով որ եղանակը միևնոյնն է եղել, ինչ որ անցեալ տարի։ Այս բանը առիթ է տալիս նրան մտածելու պատճառի մասին։ Երկար մտածելուց յետոյ նա վերջապէս գտնում է, որ այս տարուայ նրա աշխատանքի մէջ միակ տարբերութիւնը այն է, որ այս անգամ արօրի ծայրը մի քիչ երկար լինելով, երկիրը աւելի խոր է ակօսել, քան անցեալ տարի։ Մի թէ ուրեմն սա է պատճառը։ Որպէս զի ստուգի ճշմարտութիւնը, հետևեալ տարի ակօսում է նոյն արօրով։ Արտը երբ հասունանում է, նա ուրախութեամբ

նկատում է, որ այս տարի բերքը նոյնպէս լաւ է եկել, ինչպէս անցեալ տարի։

Գիւղացին ուրեմն կատարեց մտածողութեան երկու տեսակ գործողութիւն — դիտողական և եզրակացման գործողութիւն։ Նա դիտեց բերքի համեմատաբար լաւ լինելը, որը առիթ տուեց նրան եզրակացնել, թէ այստեղ մի պատճառ պիտի լինի։ Անցեալի դիտողութիւնները ապա յիշեցրին նրան, որ կարող է այստեղ տարուայ եղանակի բարեյաջող լինելը նպաստաւոր լինել։ Բայց եղանակը այս տարի նոյնն էր, ինչ որ անցեալ տարի։ Եւ ահա նա եզրակացնում է, որ եղանակը չէր կարող պատճառ լինել։ Վերջապէս նա դիտում է, որ այս տարի երկիրը աւելի խոր է ակօսել, քան անցեալ տարի, և դրանից եզրակացնում է, որ ամենահաւանական պատճառը այդ պիտի լինի։ Հետևեալ տարի փորձ է անում նա և գալիս է վերջնական եզրակացութեան, համոզուելով, որ յիրաւի—առատ բերքի պատճառը երկրի խոր ակօսելն էր։

Առարկաների և երևոյթների դիտողութեան և դրանից հանած եզրակացութեան ժամանակ, եթէ չը պատահէին ծանօթութեան սխալ դէպքեր, այն ժամանակ գոյութիւն չէր ունենալ որև է մոլորութիւն կամ նախապաշարմունք։ Իսկ մոլորութիւնը և նախապաշարմունքը, յայտնի է, որ մարդկային կեանքի ամենաոխերիմ թշնամիներն

են։ Ի՞նչ չարիք ասէք, որ մոլորութիւնից կամ նախապաշարմունքից չը առաջանայ։ Ի՞նչպէս անել ուրեմն, որ առարկաների և երևոյթների ծանօթութիւնը սխալ չը կատարուի։ Կասկած չը կայ, որ մենք պէտք է դիտողութեան և եզրակացութեան մի շատ ունենանք, մի այնպիսի չափ։ որը մեզ հեռու պահէր սխալներից։

Մի արհեստաւոր չափում է աչքով մի տարածութիւն. նա ասում է, որ այդ տարածութիւնը երկու սաժեն և երկու արշին է, և կտրում է նոյն աչքի չափով մի տախտակ։ Կտրուած տախտակը դնելով տարածութեան վերայ, նա տեսնում է, որ տախտակը կարճ է կտրել։ Այս անգամ առնում է նա չափը և գտնում է, որ տարածութիւնը ոչ թէ երկու սաժեն և երկու արշին է եղել, այլ երեք սաժեն և մի վերշոկ։ Առանց չափի դիտելը և եզրակացնելը ուրեմն մոլորեցրեց այդ մարդուն, և նա տախտակը կարճ կտրելով, թէ՛ տախտակը փչացրեց և թէ ժամանակը վատնեց։ Այդպէս էլ իւրաքանչիւրը մեզանից պէտք է իր դիտողութիւնների և եզրակացութիւնների ժամանակ մի չափ ունենայ, որ նա մոլորութեան մէջ չընկնի։ Բայց մարդկային կեանքի սահմանը շատ մեծ է, նրա կարիքները բազմաթիւ են և բազմատեսակ։ Մարդը, բացի դրանից, հասարակական էակ է, նա ունի պարտաւորութիւններ և իրաւունքներ, որոնց

մարդավայել հասկացողութիւնը և գործածութիւնը կախուած է նրա մտաւոր և բարոյական զարգացումից, որը նոյնպէս ճշմարիտ դիտողութեան և եզրակացութեան վերայ է հիմնուում։ Ուրեմն ի՞նչպիսի մի չափ պիտի ունենայ մարդը կամ ի՞նչպիսի մի չափ պիտի տալ նրա ձեռքը, որ նրա դիտելու և եզրակացնելու ժամանակ, չը մոլորեցնի նրան, ազատ պահի նրան այս լայնածաւալ աշխարհի խաբուսիկ երևոյթներից։

Այդ չափը *ամենը հիմքերի վերայ դրուած աշխարհայեցողութիւնն է։*

Եթէ մի մարդ, մի այնպիսի աշխարհայեցողութիւն է ձեռք բերել, որը ազատ է մոլորութիւնից և նախապաշարմունքից, ապա նա կարող է ապահով լինել, որ դիտելու և եզրակացնելու ժամանակ հեռու կը լինի կեանքի այդ չարիքներից։

Բայց ի՞նչպէս է ձեռք բերվում մի այդպիսի աշխարհայեցողութիւն։

Սրա միակ ճանապարհը *բնութեան ուսումնասիրութիւնն է*, այսինքն *բնութեան ճիշտ դիտողութիւնը և դրանից հանած ճշմարիտ եզրակացութիւնը*

Վերոյիշեալից հետևում է, որ այնուամենայնիւ նախ և առաջ պէտք է անսխալ դիտել և եզրակացնել կարողանալ, որպէս զի կազմուած աշխարհայեցողութիւնն էլ հաստատ հիմքերի վե-

բայ դրուած լինի։ Եւ մի այդպիսի եղանակով ձեռք բերած աշխարհայեցողութիւնը միայն կարող է, իր հերթում, մարդու մշտական և ճշմարիտ օգնականը լինել, նրա յետագայ դիտողութիւնների և եզրակացութիւնների ժամանակ։

Բայց այստեղ կարելի է հարց տալ։ Եթէ մեր դիտողութիւնների և եզրակացութիւնների վերահսկող չափը պիտի լինի այնպիսի աշխարհայեցողութիւնը, որը դրուած է ամուր հիմքերի վերայ, և որը իր հերթում ձեռք է բերուում դիտողութեամբ և եզրակացութեամբ, ապա ինչպէս պէտք է անել, որ մինչև աշխարհայեացքի կազմուելը – դիտողութիւնները և եզրակացութիւնները սխալ չը լինեն, որպէս զի կազմուած աշխարհայեցողութիւնն էլ սխալ չը լինի։

Այս դէպքում մեր միակ օգնականը հանդիսանում է *փորձը*.

Դիտելով մի որև է երևոյթ, մենք պէտք է ձգտենք նրան փորձերով հաստատել, համոզուել և ապա հաւատալ նրա ճշմարտութեան։

Մէկը ինձ խորհուրդ է տալիս մի կալսելու մեքենայ ձեռք բերել, ասելով, որ նա օրական տասնեակ ջուալ ցորեն է մաքրում ծղօտներից։ Ես հաւատալով խորհրդատուին, ձեռք եմ բերում մի հատ նրանից և տեսնում եմ, որ նա թէպէտ՝ յիրաւի՝ անհամեմատ աւելի ցորեն է կալսում, քան նահապետական եղանակով կատարուած կալ-

սելը, բայց նա յարդ չի շինում, որը անասունների համար շատ կարևոր է։ Ուրեմն մեքենան անպէտք է ինձ համար։

Ի՞նչն էր պատճառը, որ ես այս եզրակացութեան եկայ։

Իհարկէ *փորձը*։ Այդ փորձով ձեռք բերուած եզրակացութիւնը ուրեմն ինձ սովորեցրեց, որ անպայման կերպով չը պէտք է հաւատալ խորհրդատուին, այլ հարկաւոր է *տեղեկանալ*, արդեօք կալսող մեքենան կատարում է այն բոլոր պահանջները, որոնք անհրաժեշտ են կալսելու գործում։

Մենք ասացինք՝ «հարկաւոր է տեղեկանալ»։ Ո՞րտեղից պէտք է նա տեղեկանար։ Իհարկէ իմացողներից, որոնք արդէն փորձել են կալսող մեքենայի կարողութիւնը, կամ ուրիշ խօսքով— անցեալում կատարուած փորձերից։

Այդպիսով մարդը կարող է օգտուել, ոչ թէ միայն կեանքի ներկայ փորձերից, այլ նա կարող է օգտուել նաև անցեալում կատարուած փորձերից։ Եւ շատ անգամ այս վերջինը աւելի բեղմնաւոր է լինում, և մարդ ազատ է լինում մի շարք զանազան վնասներից։ Օրինակ՝ եթէ վերոյիշեալ մարդը վաղօրօք տեղեակ լիներ կալսող մեքենայի կարողութեան, նա նրան ձեռք չէր բերիլ, իզուր տեղը չէր կորցնիլ դրամը և ժամանակը։ Միւս կողմից, եթէ նա ուրիշ ունե-

նար մտածելու—արդեօք չի՞ կարելի մի այնպիսի մեքենայ շինել, որը համ ցորենը կալսի, համ էլ անասունների համար յարդ շինի—ապա այդ բոլորը կը լինէր առանց վաղօրօք տուժելու։

Ճշմարիտ է, երբեմն հանգամանքները նախատեսնել չի լինում, և մենք որքան էլ զգոյշ լինենք մեր գործերի մէջ, այնուամենայնիւ երբեմն վնասվում ենք։ Բայց դրանից, իհարկէ, չը պէտք է եզրակացնել, որ ուրեմն ճշմարիտ դիտողութիւնը և դրանից հանած անսխալ եզրակացութիւնը մեզ օգուտ չի բերում. այլ մենք շատ շատ իրաւունք ունենք ասելու, որ այնտեղ, ուր նախատեսնել չի լինում զանազան հանգամանքներ, դրա պատճառը մեծ մասամբ մեր տգիտութիւնն է և անկօր լինելը, այսինքն կամ մարդկային գիտակցութեան սահմանափակ ընդունակութիւնը, որ չի կարողանում պատճառների շարքին մինչև վերջը հետամուտ լինել, կամ բնութեան զանազան ոյժերին դիմադրել չը կարողանալը։

Այդպիսով՝ մեր դիտողութիւնների և եզրակացութիւնների ճշմարիտ լինելը մենք պէտք է նախ փորձերով հաստատենք, կամ անցեալում կատարուած փորձերից օգտուենք, և այդպիսով հաւատանք նրանց ճշմարտութեան։

Մենք այստեղ գործածեցինք մի քանի անգամ «աշխարհայեցողութիւն» խօսքը։ Նա շատերին անշուշտ հասկանալի է, բայց կարելի է կան նաև չը հասկացողներ։

Աշխարհայեցողութիւն խօսքը կարելի է ուրիշ խօսքերով այսպէս ասել.—աշխարհի առարկաների, երևոյթների և կարգերի մասին մի յայտնի հայեացք ունենալ։ Օրինակ՝ իմ աշխարհայեցողութիւնը ազգային խնդրի մասին կարող է այսպէս լինել, ձերը մի ուրիշ կերպ։ Կրօնական հարցերի մասին մէկը կարող է այսպէս մտածել կամ այս ինչ հայեացքը ունենալ, դուք կարողէք ուրիշ կերպ մտածել կամ ուրիշ հայեացք ունենալ։ Ապա աշխարհի մէջ կան բազմաթիւ կարգեր, երևոյթներ և այլն, որոնց մասին մէկը կարող է մի կարծիքի լինել, միւսը մի ուրիշ և այլն։

Կան այնպիսի երևոյթներ, որոնց մասին մարդիկ չեն կարող երկու տեսակ կարծիք կամ հայեացք ունենալ։ Օրինակ՝ ոչ ոք չի կարող ասել որ կրակը սառն է, սառուցը տաք է, ջուրը հեղուկ չէ, քարը հեղուկ է, ծանր առարկաները դէպի վեր են ընկնում և այլն։ Բայց կան երևոյթներ որոնց մասին կարելի է այս կամ այն հայեացքը ունենալ։ Սրանց է պատկանում այնպիսի երևոյթները, որոնց մասին արուած դիտողութիւնները և եզրակացութիւնները կամ սխալ են արուել, կամ նրանք մատչելի չեն եղել մարդկային դիտողութեան։ Առաջին դէպքում, այսինքն սխալ դիտողութեան և եզրակացութեան դէպ-

քում, սխալը կարելի է հեշտութեամբ ուղղել, եթէ մենք զուրկ չենք շափից, այսինքն փորձերի օգնութեամբ ձեռք բերած աշխարհայեցողութիւնից։

Մենք թէպէտ ասացինք, որ մի հաստատուն աշխարհայեցողութիւն կարելի է լինում ձեռք բերել բնութեան դիտողութեամբ և եզրակացութեամբ, և թէ նրանք պէտք է փորձերով հաստատուած լինեն, բայց անորոշ մնաց—որտեղից պէտք է սկսել դիտողութիւնը։ Աշխարհում կան, ինչպէս ասացինք, բազմաթիւ երևոյթներ, կարգեր, բնական օրէնքներ, ապա հասարակական կարգեր, հասարակական բարեկեցութեան համար յօրինուած օրէնքներ և այլն և այլն։ Ո՞ր է դրանցից աւելի հիմնաւորը և կատարեալը, որի վերայ ամենից առաջ ուղղուի մարդկային դիտողութիւնը։ Ինչ խօսք, որ նրանք բոլորն էլ մարդկային կեանքի բարեկեցութեան ծառայող նիւթեր են, բոլորիցն էլ կարելի է օգտուել, և ուրեմն բոլորն էլ կարող են դիտողութեան նիւթ դառնալ։

Այդ այդպէս է։

Բայց չը պէտք է մոռանալ, որ ինչպէս ասացինք, կան երևոյթներ, որոնց մասին մարդ չի կարող երկու կարծիք ունենալ, որից հետևում է, որ այդպիսի դէպքերում չի կարող նաև մոլորութիւն կամ նախապաշարմունք տեղի ունենալ։

Այն մարդը, որը ուզում է մի հաստատ հիմքերի վերայ դրուած աշխարհայեացք ձեռք բերել, կասկած չկայ, որ պիտի սկսի իր դիտողութիւնները, փորձերը և եզրակացութիւնները բնութեան այնպիսի երևոյթներից, որոնք մոլորեցնելու յատկութիւններից հեռու են։ Հակառակ դէպքում, այսինքն եթէ դիտողութիւնը կատարվում է նախ այնպիսի երևոյթների վերաբերմամբ, որոնց մասին մարդիկ զանազան կարծիքներ ունեն, որովհետև նրանք փորձով չեն հաստատուել, կամ անկարելի է եղել փորձ անել,—ապա այսպիսի երևոյթների մասին կատարուած սկզբնական դիտողութիւնը շատ հեշտութեամբ կը մոլորեցնի անփորձ դիտողին, և այսպիսով նա անկարող կը լինի մի հաստատուն աշխարհայեացք կազմել։ Բայց եթէ նախ սկսել է նա իր դիտողութիւնները անվիճելի երևոյթների վերայ կատարել, ապա նա սրանով հետզհետէ ձեռք կը բերի ոչ թէ միայն մի հաստատ, մոլորութիւնից զուրկ աշխարհայեցողութիւն, այլ նաև ընդունակութիւն—քննադատական և զգոյշ աչքով նայել այնպիսի երևոյթների վերայ, որոնց մասին կարծիքները զանազան են, և ուրեմն ընդունակ են մարդկանց մոլորեցնելու։

Ուրեմն դիտողութեան սկզբնական սահմանն է այն բոլորը, որոնց թէ ներկայ և թէ անցեալ փորձերով կարելի է լինում հաստատել և այդպիսով մի ճշմարիտ եզրակացութեան հասնել։

Շատ անգամ, մարդկային դիտողութիւնների շարքում, հանդիպում ենք այնպիսի դիտողութիւնների, որոնք ըստ երևոյթին ոչ մի կապ չունեն հասարակական կամ անհատական կեանքի հետ։ Այն ինչ նրանք ժամանակի ընթացքում ներդործելով, անուղղակի կերպով պատճառ են դառնում ժողովուրդների կեանքը կերպարանափոխելու։

Մի ժամանակ մարդիկ այն կարծիքի էին, որ մեր երկիրը գտնուում է տիեզերքի կենտրոնում։ Կարծում էին որ արեգակի գոյութիւնը միմիայն երկրի համար է։ Նա ստեղծուած է միայն երկրին լուսաւորելու և տաքացնելու համար, ասում էին մարդիկ։ Լուսինը և աստղերը նոյնպէս մեր երկրին ծառայող լուսատու մարմիններ էին համարուում, որոնք շարժվում են երկնակամարի վերայ, ծագում են և մայր մտնում։ Մարդիկ, բացի դրանից, կարծում էին որ բնութեան մէջ ամեն ինչ իրենց ծառայելու համար է ստեղծուած։ Նոյն իսկ մեր օրերում մենք զուրկ չենք այդ մոլորութիւնից։ Օրինակ մեր օրերում, շնորհիւ անցեալ սովորութիւնների, մենք վերին աստիճանի անգիտաբար ենք վերաբերուում մեզ հետ՝ մի երկրում ապրող կենդանիների հետ։ Բայց երբ պարզուեց, որ արեգակը և աստղերից շատերը անշարժ են, և թէ նրանց երևոյթական շարժումը առաջանում է մեր երկրի՝ արեգակի

շուրջը և իր առանցքի շուրջը պտտելուց, երբ յայտնուեց, որ մեր երկիրը արեգակի և շատ աստղերի մեծութեան հետ համեմատելով այնպէս է, ինչպէս մի խնձորը մեր երկրի մօտ, երբ յայտնուեց որ տիեզերքը իր տարածութեամբ մի յաւիտենական անսահմանութիւն է, —այն ժամանակ մեծամիտ մարդը զգաց, թէ ինչպէս ինքը մի աներևակայելի փոքրութիւն է տիեզերքի մէջ, թէ ինքը շատ էլ իրաւունք չունի մեծամիտ լինելու, ասելով—«ամենը ինձ համար է ստեղծուած»։ Այսօր տեսնում ենք, որ մեր գիտակցութիւնը թելադրում է մեզ, որոշ ուշադրութիւն դարձնել մեզ հետ ապրող կենդանիների վիճակի վերայ։ Հիմնուում են կենդանիներին հովանաւորող ընկերութիւններ, նոյն իսկ պարլամենտներում վիճաբանութեան նիւթ է դառնում նա և այլն։

Այդպիսով մենք տեսնում ենք, թէ ինչպէս մի՝ ըստ երևոյթին մեր կեանքի հետ անմիջապէս կապ չունեցող երևոյթ, ազդեցութիւն է անում և անուղղակի կերպով նպաստում է մեր մտքի և զգացումների կրթուելու գործում, որից էլ հենց կախուած է հասարակական բարեկեցիկ կեանքը։

Որպէս զի այդ հանգամանքը աւելի էլ պարզ լինի, բերենք մի օրինակ պատմութիւնից, որը ցոյց է տալիս մի կողմից, թէ ինչպէս նա ըստ երևոյթին շատ քիչ կապ ունի բուն կեանքի հետ,

միւս կողմից, թէ ինչպէս փորձերով չ՝հաստատուած դիտողութիւնը և եզրակացութիւնը մոլորեցնում է մարդու, և թէ ինչպէս մի սխալ և անհաստատ աշխարհայեցողութիւն է կազմվում ժողովուրդի մէջ, որը տանում է նրան ուղղակի դէպի անբարոյականութիւն և կորուստ։

Յունաստանը մօտ վեց հարիւր տարի Քրիստոսից առաջ ունեցաւ մի մտածող, Թալես անունով, որը դիտելով բնութեան մէջ մի շարք երևոյթներ, եկաւ այն եզրակացութեան, որ մեր աշխարհը ջրից է առաջացել։ Օրինակ՝ նա տեսնում էր, որ կենդանիները և բոյսերը իրանց մէջ թացութիւն են պարունակում։ Սնունդը, որով աճում են կենդանիները, նոյնպէս թաց է։ Սերմը, որից առաջանում է բոյսը, նոյն թացութիւնն է պարունակում և այլն։ Եւ ահա գալիս է այն եզրակացութեան, որ աշխարհը ջրից է առաջացել։

Մի ուրիշ՝ դրան յաջորդողը, որ Անաքսիմանդր էր կոչվում, դիտումէ նոյնպէս բնութիւնը, բայց ուրիշ եզրակացութեան է գալիս։ Սա ասում է, որ թէպէտ աշխարհի գոյանալուն մի սկզբնապատճառ կայ, բայց նա մարդկային հասկացողութիւնից բարձր է, նրան որոշել չի կարելի։

Յետոյ գալիս է մի ուրիշ մտածող (Անաքսիմենես), որի դիտողութիւնը բերում է այն եզրակացութեան, որ աշխարհը առաջ է եկել

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI-1922
именна, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1002/9655

օդի խտացումից։ Օրինակ՝ նա կարծում էր, որ ջուրը օդի խտացումն է, որովհետև, ասում էր նա, ջուրը շոգի է դառնում և օդի մէջ կորչում... կամ կենդանիները օդ են շնչում և այլն։

Պիթագորասին պատկանող մտածողները գալիս են այն եզրակացութեան, որ թուերն են աշխարհի սկզբնապատճառը...

Իսկ մի ուրիշը (Քսենոֆոն) եզրակացնում է, որ աշխարհի սկզբնապատճառը մի չ՝ծնուած էակ է, որ ամբողջապէս հասկացողութիւն է, տեսողութիւն է, լսողութիւն է և այլն։

Յետոյ գալիս է մի ուրիշը (Պարմենիդես), որ եզրակացնում է, թէ աշխարհի գոյութիւնը և մտածութիւնը միևնոյն բաներն են, որը ոչ գոյացել է, ոչ բաժանուող է, ոչ էլ ժամանակ ունի և այլն։

Ապա մի ուրիշ դիտող (Զենօ) ընդունում է, որ գոյութիւն չունի ոչ մեծութիւն, ոչ էլ շարժում։ Առարկաները որ շարժվում են, նրանք մեզ միայն այդպէս թվում են. նրանք չեն շարժվում։

Սրան յաջորդ մտածող Հերակլիտը եզրակացնում է, որ ամեն ինչ կրակից է առաջացել, կրակով էլ ոչնչանում է...

Մի ուրիշը (Էմպեդոկլես) ընդունում է, որ աշխարհի սկզբնապատճառը սէրն է և ատելութիւնը։ Առաջինը ստեղծում է, երկրորդը քայքայում...

Յետոյ գալիս են Ատոմիստները, որոնք ասում են, աստուածները գործ չունեն ստեղծագործութեան մէջ, ինչպէս ժողովուրդը ընդունում էր, այլ ամեն ինչ առաջանում է ինքն իրան, փոքրիկ մասնիկներից, որոնց նրանք ատոմներ էին անուանում։ Այդ ատոմները դասաւորվում են միմեանց մօտ և նրանցից առաջանում է թէ կենդանին, թէ բոյսը, թէ քարը և թէ բոլոր առարկաները։

Ատոմիստներից յետոյ երևան է գալիս մի ուրիշ մտածող (Անաքսագորաս), որը գալիս է այն եզրակացութեան, թէ աշխարհի սկզբնապատճառը մի մտածող էակ է։

Մենք տեսնում ենք, որ այդ բոլոր աշխարհայեցողութիւններն էլ մարդկային բուն կեանքի հետ ըստ երևոյթին շատ քիչ կապ ունեն։ Սակայն այդպէս մտածելը մի մեծ սխալ կը լինէր, որովհետև նրանք բոլորն էլ ազդեցութիւն արին հասարակական կամ անհատական մտածողութեան վերայ։

Բայց ինչ տեսակ ազդեցութիւն արին նրանք։ Իհարկէ չփոթեցրին և մոլորեցրին մարդկանց մտքերը, որովհետև այդ աշխարհայեցողութիւնների ոչ մէկը չը կարողացաւ փորձերով հաստատուել և անհերքելի ճշմարտութիւն դառնալ։ Իսկ դրա հետևանքը պէտք է շատ ցաւալի լինէր, որ յիրաւի էլ եղաւ։

Այդ բոլորի հետևանքը եղաւ սոփեստութեան ծնունդը։ Սոփեստները տեսնում են, որ մի ճշմարիտ աշխարհայեացք գոյութիւն չունի։ Տեսնում են որ այդ աշխարհայեցողութիւնները լի են հակասութիւններով։ Նրանք հետամուտ են լինում պատճառներին և գտնում են, որ հակասութիւնների պատճառը շրջապատող աշխարհն է։ Այդ աշխարհը մէկին առիթ է տալիս մտածելու, որ ամեն ինչ ջրից է առաջանում, միւսը կարծում է՝ մի աներևոյթ էակ է պատճառը, մի երրորդին առիթ է տալիս եզրակացնելու, որ օդն է պատճառը, չորրորդին թվում է, որ թուերն են, հինգերորդը պնդում է, թէ ատոմներն են և այլն և այլն։ Եւ ահա սոփեստները գալիս են այն եզրակացութեան, որ աշխարհի միջոցով ոչ մի ճշմարտութեան չի կարելի հասնել, այլ ճշմարտութիւնը ամեն մի մարդ ինքը պիտի որոշի, այսինքն ամեն մի որոշում անհատական ոյժով պիտի լինի։ Երևոյթը պիտի լինի այնպէս, ինչպէս նա անհատին երևում է։ Ինձ կարող է այսպէս երևալ, քեզ մի ուրիշ կերպ, երրորդին՝ մի ուրիշ և այլն. հենց ճշմարտութիւնն էլ դրա մէջն է. մի ընդհանուր ճշմարտութիւն գոյութիւն չունի...

Սոփեստները ապա սկսեցին տարածել իրենց ուսուցումը կամ վարդապետութիւնը ժողովուրդի մէջ։ Այդ վարդապետութեան շնորհիւ

սկսեց հետզհետէ մարդկային կամայականութիւնը երևան գալ, ու պարտքի և իրաւունքի հասկացողութիւնները սկսեցին կամայականութեամբ չափուել։ Բարքերը սկսեցին փչանալ. ժողովուրդը սկսեց անբարոյականանալ։ Քաղաքական և ընկերական կեանքը սկսեց ղեկավարուել սոփեստների վարդապետութեամբ, ինչպէս վկայում է ժամանակակից փիլիսոփաներից մէկը— Պլատոն։ Իսկ մեր ժամանակակից պատմագիրներից մէկը (Զվեգզեր), այսպէս է նկարագրում սոփեստութեան շրջանը։ «Նոր լոյս ընկած այն հասկացողութիւնը, որ անհատական եսը կարող է ամեն ինչ կամայական կերպով որոշել, կազմում էր սոփեստների սկզբունքը։ Այդ սկզբունքը երևան էր գալիս գործնական կեանքում, որպէս մի անզուսպ եսամոլութիւն, և տարածում էր իր իշխանութիւնը թէ պետութեան և թէ մասնաւոր կեանքի վերայ։ Իւրաքանչիւրը գերադասում էր իր մասնաւոր շահերը ընդհանուր շահերից, ընդհանուր բարեկեցութիւնից։ Մարդկային գործողութիւնների որոշող չափը կամայականութիւնն էր։ Այդ ոգին երևան էր գալիս ատենարանութիւնների մէջ, դատարանների մէջ, կուսակցութիւնների մէջ և այլն և այլն». Մի խօսքով, չնորհիւ անհաստատ աշխարհայեցողութեան, ժողովուրդը ժամանակի ընթացքում հետզհետէ ընկղմեց բարոյական ցեխի մէջ։

Եւ սակայն այսպիսի մի ցաւալի վախճան չէր ունենալ, եթէ սոփեստներից առաջ այնպիսի փոփոխակի և անհաստատ աշխարհայեցողութիւնները չը լինէին։ Դրանք այնպիսի աշխարհայեցողութիւններ էին, որոնք կազմուել էին մեծ մասամբ սխալ դիտողութիւններից և եզրակացութիւններից, բայց որ գլխաւորն է, նրանցից ոչ մէկը չէր կարողացել փորձով հաստատուել։

Թալեսը ինչպիսի փորձ պիտի անէր, որ հաստատէր նրա հայեացքը, թէ ամեն ինչ յիրաւի ջրից է առաջացել։ Եթէ օրինակ՝ նա պնդում էր թէ սնունդի թաց լինելն է պատճառը, որ կենդանին աճում է, ապա կարելի էր հետևցնել, որ կենդանիները ուրեմն միայն ջուր խմելով կարող էին ապրել կամ աճել։ Իսկ այդպիսի մի փորձը ցոյց կ'տար նրա հայեացքի սխալ լինելը, որովհետև կենդանին սնուելով միայն ջրով, շուտով կը մեռնէր։ Միւս կողմից չէր կարելի հերքել, որ ջուրը սնունդի մի մասն է կազմում, որովհետև առանց ջրի ոչ մի կենդանի չէր կարող ապրել։ Այսպիսով Թալեսի աշխարհայեացքի դէմ կարելի էր այն ժամանակ այս կամ այն առարկութիւնը անել, առանց նրան հերքել կամ հաստատել կարողանալու, որ ասել է անորոշ թողնել։

Անաքսիմանդրը դիտելով, տեսնում է, որ ոչ մի երևոյթ ինքն իրան առանց պատճառի չի

առաջանում, բայց մարդկային սահմանափակ գիտակցութիւնը չը կարողանալով պատճառների ամբողջ շարքը գտնել, գալիս է այն եզրակացութեան, որ գոյութիւն ունէ մի անորոշ սկզբնապատճառ։ Այստեղ արդէն անկարելի է որև է փորձ անել, նա մնում է յիրաւի անորոշ։ Իսկ անորոշութիւնը կարող է առհասարակ խելացի կեանքի դեկավար լինել...

Զնձօձ ուրանում է որև է մեծութիւն և շարժում։ Արդեօք ինչպիսի փորձով պիտի հաստատէր նա իր հայեացքը, չէ՞ որ առարկաների մէջ կայ մեծ և փոքր, չէ՞ որ նրանցից շատերը անդադար շարժողութեան մէջ են։ Այդպէս էլ միւսները...

Այդպէս ուրեմն, որպէս զի անփորձ գիտողը մոլորութեան մէջ չը ընկնի, պէտք է սկզբում գիտէ այնպիսի երևոյթներ, որոնք փորձերով հաստատուել կարողանան, և ապա հանել դրանցից եզրակացութիւններ, որոնք նոյնպէս փորձերով հաստատուել կարողանան, և այն ժամանակ միայն կազմել դրանցից մի հաստատուն հայեացք, կամ աշխարհայեացք։

Իսկ գիտողութեան այսպիսի առարկաներ և երևոյթներ բնութեան մէջ շատ կան։ բնագիտութեան մի մասը հենց սրանցով է զբաղուած։ Մենք էլ պէտք է նրանց գիտողութեամբ սկսենք։

Բայց նախ քան գիտելն էլ, կարևոր է գիտենալ մի հանգամանք։

Կարող էինք արդեօք գիտել որև է երևոյթ, եթէ մենք գոնէ առօրեայ կեանքից ձեռք բերած չը լինէինք որոշ փորձառութիւն կամ հայեացք։

Ի հարկէ ոչ։

Առօրեայ կեանքը սակայն տալիս է մեզ ճըշմարտի հետ միասին նաև սուտը, իսկականի հետ միասին նաև երևոյթականը։ Կամ ուրիշ խօսքերով. առօրեայ հասարակ կեանքը տալիս է մեզ ուղիղ հասկացողութիւնների հետ միասին նաև շատ սխալ հասկացողութիւններ։ Բայց կարող ենք արդեօք սխալ հասկացողութիւններով նախապատրաստուած լինել, և դրանցով գիտել բնութիւնը։

Ի հարկէ ոչ։

Ուրեմն նախ քան գիտելն էլ անհրաժեշտ է ազատուել մեր մէջ արդէն գոյութիւն ունեցող սխալ հասկացողութիւններից։ Նոր և անփորձ գիտողը, որքան էլ ազատ լինի մոլորութիւնից և նախապաշարմունքից, այնուամենայնիւ համեմատաբար կարող է լինել. երիտասարդը, որը անորոշ և անհաստատ աշխարհայեցողութեան տակ է մեծացել, աւելի քիչ նախապաշարմունք և սխալ հասկացողութիւններ ունի, քան մի ծերունի, որը նոյն աշխարհայեցողութեան տակ է

անցրել իր կեանքը։ Բայց նրանց երկուսի մէջ էլ գոյութիւն ունեն նրանք։

Այդ սխալ հասկացողութիւնները գոյացել են մեր մէջ դարձեալ շնորհիւ սխալ ըմբռնուած երևոյթների։ Մարդը օրինակ երևակայել է մի բան, որին ոչ մի տեղ չի տեսել, բայց և այնպէս «սատանայ» անունն է տուել։ Ուրեմն երևոյթների սխալ հասկացողութիւնից ստեղծուել է մի գոյութիւն չունեցող առարկայ, որը ընդունակ է մոլորութիւնը շարունակել։

Մարդը, յետոյ, աշխարհի երևոյթների և առարկաների գիտակցելը «զգալ» բառով է արտայայտում։ Դու եթէ տեսնում ես մի առարկայ, օրինակ մի ծառ, ապա ասումես, «ես զգում եմ, որ մի ծառ եմ տեսնում»։ Այստեղ «զգալ» խօսքը թէ հիմնաւոր է և թէ ճշմարիտ։ Բայց եթէ մէկը ասում է, թէ նա «զգում» է, որ մի «սատանայ» է տեսնում, այդ կը լինէր ի հարկէ անհիմն և սխալ։

Ուրեմն ամենից առաջ պէտք է ազատ լինել այսպիսի հասկացողութիւններից։ Պէտք է՝ օրինակ՝ գիտենալ, թէ այս ինչ խօսքերից կամ ասացուածներից բաղկացած արտայայտութիւնը ճշմարիտ է թէ սխալ։ Օրինակ՝ շատերը հաւատում են «ճակատագրին», որի հատուածներից մարդիք այնքան տուժեցին և դէռ շարունակում են տուժել։ Իսկ հաւատը դէպի ճակատագիրը հետևանք է

խաբուսիկ երևոյթների, իսկ խաբուսիկ երևոյթները ոչ այլ ինչ են, եթէ ոչ սխալ ընբռնուած խօսքերից և ասացուածներից բաղկացած արտայայտութիւններ։ Մենք պէտք է ուրեմն զբաղենք ամենից առաջ մի չափ, որ մի անգամ ընդ միշտ որոշի, թէ ինչպիսի դէպքերում պէտք է, օրինակ՝ «զգացում» և «առարկայ» խօսքերը գործածել, կամ նրանց այնտեղ լինելը հիմնաւոր ընդունել, ուրիշ խօսքերով—ինչ է ինքը «զգացումը» կամ «առարկան», կամ սրանց նման մի շարք ուրիշ խօսքեր և ասացուածներ, որոնք նոյնպէս զանազան երևոյթներ կամ մտքեր են արտայայտում, օրինակ՝ «պատճառ», «ներգործութիւն», «ոյժ» և այլն և այլն։

Այս նպատակով տալիս ենք ընթերցողին, ամենից առաջ, հռչակաւոր բնագէտ Հիռքշէի «Առաջնորդ բնագիտութեան» գրքոյկից մի կտոր թարգմանութիւն։

---

1. ԶԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ԱՌԱՐԿԱՆԵՐ:

Մենք մեր արթուն ժամանակ նշմարում ենք մեր զգայարանքների օգնութեամբ որև է բան աշխարհի մէջ, որի մէջ մենք ապրում ենք, և որի մի մասն էլ մենք ենք կազմում: Մենք շարունակ գիտակցում ենք, որ մենք շոշափում ենք, լսում ենք կամ հոտ ենք առնում, տեսնում ենք, եթէ մթութեան մէջ չենք, համ ենք առնում, երբ ուտում կամ խմում ենք: Այս եղանակով ձեռք բերած գիտակցութիւնը անուանում ենք մենք *զգացումներ*:

Եթէ մենք այդ զգացումներից մէկը կամ միւսը ունենք, այն ժամանակ ասում ենք.—մենք շոշափում ենք, լսում ենք, հոտ ենք առնում, տեսնում ենք կամ համ ենք առնում: Մի ծանօթ հոտ առիթ է տալիս մեզ նկատելու, որ մենք, օրինակ, սոխի հոտ ենք առնում: Մի ծանօթ համ—որ մենք խնձորի համ ենք առնում, մի ծանօթ աղմուկ—որ մենք սայլի ձայն ենք լսում, մի յայտնի երևոյթ մեր առաջ—որ մենք մի ծառ

ենք տեսնում: Եւ այն, ինչ որ մենք մեր զգայարանքների օգնութեամբ նշմարում ենք—անուանում ենք մի *բան* կամ մի *առարկայ*:

2. ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ:

Մենք յետոյ այս բոլոր բաների կամ առարկաների մասին ասում ենք, որ նրանք մեր յիշած զգացումների պատճառներն են, իսկ զգացումները այդ պատճառների ներգործութիւններն են: Օրինակ՝ եթէ մենք մի ծանօթ աղմուկ ենք լսում, ասում ենք որ աղմուկը մօտով անցնող սայլի ներգործութիւնն է, կամ թէ աղմուկը մօտով անցնող սայլն է պատճառում: Եթէ մենք մի այրուող բանի հոտ ենք առնում, ենթադրում ենք, որ այդ մի այրուող առարկայի ներգործութիւնն է և նայում ենք երկիւղով մեր չորս կողմը—գտնելու հոտի պատճառը: Եթէ մենք մի ծառ ենք տեսնում, ապա հաւատում ենք, որ գոյութիւն ունի մի բան կամ առարկայ, որը պատճառ է դառնում այդ եշխոյթի մեր աչքերի առաջ երևալուն:

3. «ԻՆՉՈՒ» ԽՕՍՔԸ: ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԲԱՑԱՏՐԵԼ»:

Եթէ խօսքը վերաբերում է այրուող առարկային, մենք կամ ասում ենք —եթէ մենք յիրաւի կրակ ենք գտել—հոտի պատճառը իմացանք, և կամ թէ ասում ենք, որ մենք գտանք այն *հիմքը*, որը ցոյց է տալիս, թէ *ինչու* էր այրուող բանի հոտ գալիս. ուրիշ խօսքով, մենք նրան *բացատրում* ենք: Այդպիսով, մի որև է առարկայի կամ երևոյթի մասին տուած «ինչու» հարցը իմանալ կամ բացատրել, նշանակում է նրա պատճառը իմանալ: Բայց այն, որը մի որև է բանի կամ երևոյթի պատճառ է, ներգործութիւն է մի ուրիշ բանի կամ երևոյթի: Օրինակ ընդունենք, որ այրուելու հոտը պատճառում է այրուող յարդը: Այն ժամանակ իսկոյն հարցնում ենք. ինչը եղաւ կրակ ընկնելու պատճառը: Գուցէ մենք գտնում ենք, որ մի վառած լուծկի է եղել ձգուած՝ յարդի մէջ: Այս դէպքում ասում ենք՝ մի վառած լուծկի է եղել կրակի պատճառը: Սակայն մի վառած լուծկի չէր կարող այնտեղ գտնուել, եթէ որև է մէկի կողմից ձգուած չը լինէր: Այդ նշանակում է ուրեմն, որ լուծկիի գոյութիւնը մի ներգործու-

թիւն է, որ առաջ է բերել որև է մէկը, որպէս պատճառ: Յետոյ մենք հարցնում ենք. ինչու այդ որև է մէկը ձգեց այնտեղ լուծկի. արդեօք անուշադրութիւնից առաջացաւ, թէ դիտաւորութեամբ արեց: Եթէ այդ վերջինն է ճշմարիտը, ապա ինչն էր շարժառիթը կամ պատճառը, որ նրան առիթ տուեց կրակ ձգելու, կամ ինչը կարող էր արդարացնել մի այդպիսի շարժառիթ: Պարզ է, որ սրանց նման մի շարք հարցեր կարելի էր տալ, որոնք հետևում են մէկը միւսից:

Այդպիսով մենք հաւատում ենք, որ այդ բոլորը ներգործութիւն է նախընթաց պատճառի, որը իր հերթում դարձեալ ներգործութիւն է մի ուրիշ պատճառի, և այդպէս շարունակ—պատճառների և ներգործութիւնների մի շղթայ, որ այնքան է հեռու գնում, որքան մենք ցանկանում ենք նրան հետամուտ լինել:

Իւրաքանչիւր երևոյթ բացատրուած է համարվում, եթէ մենք նրա պատճառը գտնում ենք: Բացատրութիւնը վերջնական է համարվում (համեմատաբար), եթէ կարողանանք այդ պատճառի պատճառն էլ գտնել և քանի մենք պատճառների և ներգործութիւնների շղթային հետամուտ լինելու կարողութիւն ունենանք, այնքան էլ բաւականութիւն կը տայ մեզ բացատրութիւնը: Սակայն մի որև է երևոյթի բացատրութիւնը չի կարող բոլորովին վերջնական լինել, որովհետև

մարդկային գիտակցութիւնը, նոյն իսկ ամենաաջող դէպքում, այնքան սահմանափակ է, որ նա անկարող է հետամուտ լինել մինչև երևոյթների սկիզբը։

4. ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՈՅԺԵՐ։

Եթէ մի որև է առարկայ միշտ մի առանձին ներգործութիւն է առաջ բերում, կամ պատճառում, ապա մենք մի այդպիսի ներգործութիւն անուանում ենք երբեմն մի *յատկութիւն*, երբեմն էլ մի *ոյժ*, որ յատուկ է առարկային։ Այսպէս օրինակ, սոխի հոտը նրա մի յատկութիւնն է, որովհետև սոխը միշտ միևնոյն իրեն յատուկ հոտն է պատճառում, եթէ մօտ է մեր հոտառութեան։ Արճիճը ծանրութեան յատկութիւն ունի, որովհետև նա միշտ ծանրութեան զգացում է պատճառում, երբ մենք առնում ենք նրան մեր ձեռքը։ Գետի հոսանքը ոյժ ունի ջրաղացի անիւը շարժելու, որովհետև անիւի պտոյտի պատճառը նա է, և մի թունաւոր օձ ոյժ ունի մի մարդ սպանելու, որովհետև նրա խայթոցը մի մարդու մահ կարող է պատճառել։ Յատկութիւնները և

ոյժերը ուրեմն որոշ ներգործութիւններ են, որոնք պատճառվում են առարկաներից և որոնց տիրապետում են առարկաները։

5. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ։ ԲՆՈՒԹԻՒՆ։

Մի մեծ թւով առարկաներ, որոնց մենք մեր զգայարանքների օգնութեամբ նշմարում ենք, օրինակ տներ և տան կարասիք, կտրքեր և մեքենաներ—կոչվում են *արհեստական իրեր* կամ *առարկաներ*, որովհետև նրանք մարդու հնարագիտութեամբ և արուեստով են ձևաւորվում, կամ ինչպէս մինչև անգամ ասվում է, մարդիկ են նրանց շինում։ բայց կան և շատ իրեր, որոնք մարդկային ձեռքի շնորհք չեն, և նրանք կը մնային ինչպէս կային, եթէ նոյն իսկ մարդիկ գոյութիւն չունենային։ Այսպէս օրինակ՝ երկինքը և ամպերը, արեգակը, լուսինը և աստղերը, ծովը իր ժայռերով, քարոտ և աւազոտ ափերով, բլուրները և հովիտները, ինչպէս և բոլոր վայրի կենդանիները և բոյսերը։ Այսպիսի իրերը կոչվում են *բնական առարկաներ*, իսկ նրանց ամբողջութիւնը կոչվում է *բնութիւն*։

6. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԻՐԵՐԸ ԲՆԱԿԱՆ ԻՐԵՐ ԵՆ, ՈՐՈՆՔ ՁԵՒԱԿԵՐՊՈՒԵԼ ԵՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՁԵՌՔՈՎ, ՄԻՄԻԱՆՑ ԵՆ ԿՑՈՒԵԼ, ԿԱՄ ԲԱԺԱՆՈՒԵԼ։

Թէպէտ այն տարբերութիւնը, որ մենք դնում ենք բնութեան և արուեստի մէջ, բնական և արհեստական առարկաների մէջ—շատ հեշտ է անվում, և վերին աստիճանի յարմար է, բայց մենք չը պիտի մոռանանք, որ բոլորը վերջ ի վերջոյ բնութեան շնորհն է, որ նոյն իսկ արհեստական իրերը, որոնց մենք սովորաբար մարդու ձեռքի արդիւնք ենք համարում, միմիայն բնական առարկաներ են, որոնց մարդը փոխել և ուրիշ ձև է տուել, և թէ մարդը չի կարող ոչինչ ստեղծել, այսինքն ոչինչ չի կարող արդիւնաւորել, որը առաջուց մի որև է ձևի տակ գոյութիւն ունեցած չը լինի։ Նաև չը պէտք է մոռանանք, որ եթէ մարդը բնական առարկաները է ձևափոխում, միմիանց է կցում կամ բաժանում, ապա նա անում է այդ, նոյն այն ոյժերի օգնութեամբ, որոնք պատկանում են նաև բնական առարկաներին։ Արհեստական իրերն են իսկապէս այն բոլորը, որին ընութեան մի մասը, որ մենք մարդկութիւն ենք անուանում, առաջ է բերել. ներգործելով մնացած մասերի վերայ։

Մենք խօսում ենք մի արկղ «պատրաստելու» մասին, որ շատ ուղիղ կը լինէր, եթէ մենք սրանով ասել ուզենայինք, որ մենք տախտակները ձևակերպել ենք և միմեանց մեխել։ Բայց փայտը մի բնական առարկայ է, ինչպէս նաև մեխի երկաթը։ Մի ժամացոյց «շինուած» է բնական առարկաներից—ոսկուց և ուրիշ մետաղներից, որոնց գանազան ձևեր է տրուած և միմիանց կցուած։ Հանդերձի կտորները «պատրաստվում» են բնական առարկաներից—բրդից, բամբակից կամ մետաքսից, և մարդիկ, որոնք այդ բոլորը պատրաստում են, նոյնպէս բնական առարկաներ են։

Հիւսնը, որմնադիրը, կօշկակարը և բոլոր միւս արհեստաւորները և արուեստագէտները այնպիսի մարդիկ են, որոնք բնական որոշ առարկաների, ոյժերի և յատկութիւնների մասին, ինչպէս նաև որոշ պատճառների և ներգործութիւնների մասին այնքան տեղեկութիւն ունեն, որ ընդունակութիւն են ձեռք բերել բնական առարկաները միաւորել, ձևափոխել և մարդկանց համար պէտքական դարձնել։

Հիւսնը չէր կարող մի աթոռ «պատրաստել», ինչպէս սովոր ենք մենք ասել, եթէ նա փայտի յատկութեան և նրա ոյժի մասին տեղեկութիւն չունենար։ Երկաթագործը չէր կարող մի պայտ շինել կամ «պատրաստել», եթէ չ'իմանար, որ

չիկացրած երկաթը կակուղ է լինում և թույլ է տալիս հեշտութեամբ զանազան ձևի դարբնել։ Աղիւսագործը պէտք է կաւի շատ յատկութիւնների հետ ծանօթ լինի, և մածուծանողը չէր կարող ոչ մի գործ շինել, եթէ նա չիմանար, որ կակղութիւնը և հեշտ ծեծուելը արճճին յատուկ է, և թէ նա չափաւոր տաքութեան տակ հալվում է։ Այսպիսով՝ ամեն մի արհեստ գործադրելու համար անհրաժեշտ է ծանօթ լինել բնական պատճառների և ներգործութիւնների հետ։ Արհեստների կատարելագործումը կախուած է հենց նրանից, որ մենք աւելի և աւելի ծանօթ լինենք բնական առարկաների յատկութիւնների և ոյժերի հետ, ինչպէս նաև պատճառների և ներգործութիւնների յարաբերութեան հետ, որպէս զի գտնենք, թէ ինչպէս պէտք է անենք, որ առարկաների յատկութիւններից և ոյժերից օգտուենք, նրանց մէջ եղած պատճառների և ներգործութիւնների կապը մեր սեպհական օգդին ծառայեցնենք։

7. ԲՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՇԱՏ ԱՌԱՐԿԱՆԵՐ, ԻՆՉՊԷՍ ԵՒ ԱՅՆ ԿԱՊԸ, ՈՐ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՇԱՏ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՒ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԷՋ—ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵՍՆ ՍԱՀՄԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԵՆ ԳՏՆՎՈՒՄ։

Բնական առարկաների մէջ գտնվում են, ինչպէս մենք տեսանք, շատերը, որոնք մեր իշխանութեան տակն են գտնվում, որոնց մենք մեր օգտին կարող ենք ծառայեցնել։ Սակայն բնութեան մէջ գոյութիւն ունեն և այնպիսի հսկայ իրեր և նրանց միաւորող պատճառներ և ներգործութիւններ, որոնց դէմ մենք ոչ մի ոյժ չունենք։ Արեգակը ծագում է և մայր մտնում, լուսինը և աստղերը երկնքում շարժվում են շարունակ։ Գեղեցիկ եղանակը և փոթորիկը, ցուրտը և տաքը յաջորդում են միմիանց։ Ծովը շարժվում է կատաղի և լինում է հանդարտ, հայելու նման հարթ, նայած՝ փոթորկալի քամի է, թէ հանդարտ եղանակ։ Անհամար բոյսեր և կենդանիներ ծնվում են, զարգանում են և ոչնչանում, և մենք ոչ մի ներգործութիւն չունենք բնութեան այդ երևոյթների վսեմ ընթացքի վերայ։ Փոթորիկները և երկրաշարժը աւերում են երկիրներ, հրաբուխների ժայթքումները աւերակ են դարձնում ուրիշները. մի աջող տարի պարգևում է

առատութիւն և բարեկեցութիւն, այնինչ մի ուրիշ տեղ երկարատև երաշտը պատճառում է սով, հիւանդութիւններ։ Այդ բոլոր դէպքերում մարդու անմիջապէս խառնուելը ոչ մի արդիւնք բերել չի կարող, և քանի նա դէռ տգէտ է, բնութեան հսկայական ոյժերի դիմաց ներկայանում է ինչպէս մի խաղալու գնտակ։

---

8. ԲՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ։ ՈՉ ՄԻ ԲԱՆ ՏԵՂԻ ՉԷ ՈՒՆԵՆՈՒՄ ԴԻՊՈՒԱԾՈՎ, ԿԱՄ ՊԱՏԱՀԱԲԱՐ։

Մարդիկ երբ սկսեցին բնութիւնը ուշի ուշով դիտել, առաջինը, որ նրանք սովորեցին, էր այն, որ շատ իրողութիւններ տեղի են ունենում կանոնաւոր կարգով, և թէ որոշ պատճառներ, միշտ միևնոյն ներգործութիւնն են առաջ բերում։ Արեգակը ծագում է միշտ երկնքի մի կողմից և մայր մտնում միւս կողմից։ Լուսնի փոփոխութիւնները հետևում են միմիանց միևնոյն կերպով և կանոնաւոր ժամանակամիջոցներում։ Ցայտնի աստղերը երբէք մայր չեն մտնում նոյն հորիզոնի տակ, որտեղ մենք ապրում ենք։ Տարուայ եղանակները կանոնաւոր են՝ աւելի կամ պակաս չափով։ Ջուրը միշտ հոսում է բարձրից դէպի ցած։ Կրակը միշտ տաք է։ Բոյսերը աճում են սերմերից և առաջ են բերում նոր սերմեր, որոնցից դարձեալ նոյն տեսակի բոյսեր են աճում։ Կենդանիները ծնվում են, աճում են, հասնում են հասունութեան հասակին և մեռնում են, և այդ բոլորը տեղի է ունենում միևնոյն ձևով—տարիների ընթացքում։ Այդպիսով մարդը հետզհետէ գալիս էր այն եզրակացութեան, որ բնութեան մէջ գոյութիւն ունի մի կարգ, պատճառների և ներգործութիւնների մի մշտնջենաւորութիւն։ Մի որև է բան բացատրուած էր համարվում, եթէ կարելի էր լինում մի այդպիսի կարգ և կանոն ապացուցանել, այնինչ այնպիսի բաներ, որոնց անկարելի էր բացատրել՝ ասվում էր—նրանք դիպուածական են, կամ պատահաբար են առաջ եկել։ Սակայն քանի ուշի ուշով հետախուզուեց բնութիւնը, այնքան էլ պարզուեց, որ կարգը նախիշխող է, և երևոյթական անկարգութիւնը յայտնուեց մի զժուար ըմբռնելի կարգ։ Մեր օրերում ոչ ոք այնքան յիմար չէ, որ հաւատայ, թէ մի որև է բան դիպուածով է պատահում, կամ թէ յիրաւի՝ գոյութիւն ունի դիպուած, այսինքն իրողութիւն, որ չունենայ պատճառ։ Եթէ մենք ասում ենք, որ մի բան տեղի է ունենում դիպուածով, ապա իւրաքանչիւրը կը համաձայնուի, որ մենք դրանով միայն ասել ենք ուզում,

թէ մենք չը գիտենք այն պատճառը, կամ հիմքը, թէ ինչու է այդ իրողութիւնը տեղի ունենում։ Դիպուած կամ պատահական խօսքերը ցուցմունքներ են մեր տգիտութեան, միայն ուրիշ խօսքերով արտայայտուած։

Այս ըսպէին, երբ ես պատուհանից դուրս եմ նայում, անձրևում է և սաստիկ փոթորիկ է։ Ծառերի ճիւղերը կատաղի շարժվում են այս և այն կողմը։ Կարող է պատահել, որ մի մարդ այս ծառերի մէկի տակ ապաստան է գտել։ Դուցէ հետևում է մի՝ աւելի ուժգին քամու զարկ, քան սովորականը, և կոտրվելով մի ճիւղ, ընկնում է այդ մարդու վերայ և վտանգաւոր վիրաւորում։ Այդ իրողութիւնը կը կոչուէր երևի «դիպուածական». այդ մարդը գուցէ կասէր. նա դուրս գնաց «դիպուածով», ծառի տակ ապաստան փնտռեց «դիպուածով» և տեղի ունեցաւ «դիպուած»։ Այս իրողութեան մէջ սակայն չը կայ ոչինչ դիպուածական։ Փոթորիկը ներգործութիւն է պատճառների, որոնք գուցէ հարիւրաւոր մղոն հեռաւորութիւնից ներգործում են մթնոլորդի վերայ։ Մի տերևի իւրաքանչիւր շարժումը հետևանք է մեքենական ոյժի, որ պատճառում է քամին, ներգործելով նրա մակերևոյթի վերայ։ Եթէ ճիւղը կոտրվում է, ապա այդ լինում է այն կապի շնորհիւ, որ գոյութիւն ունէ նրա ոյժի և քամու աստկութեան մէջ։ Իսկ մարդու ծառի տակ գըտ-

նուելը պատճառների և ներգործութիւնների շղթայի վերջին օղն է, որ բնական կարգով միմեանց հետևել են։

Նրա սկզբնաւորութիւնն էր մի պատճառի ներգործութիւնը, և ինքը իր հերթում ներգործեց, որ ծառի տակ ապաստան փնտռեց։

Բայց քանի որ մենք բաւականաչափ գիտուն չենք, այդ՝ պատճառների և ներգործութիւնների բարդ հետևանքը, որ ճիւղի անկումը մարդու վերայ առաջ բերեց, —անուանում ենք դիպուածական։

---

9. ԲՆԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ։ ՕՐԷՆՔՆԵՐԸ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՉԵՆ։

Եթէ մենք կրկնած և ուշի ուշով դիտողութեամբ այն համոզմունքն ենք ձեռք բերել, որ մի բան միշտ պատճառ է մի որոշ ներգործութեան, կամ թէ որոշ իրողութիւնները միշտ միևնոյն կարգով են տեղի ունենում, ապա մենք մի այդպիսի եղանակով գտած ճշմարտութիւնը անուանում ենք *բնական օրէնք*։ Այսպէս օրինակ՝ մի բնական օրէնք է, որ իւրաքանչիւր ծանր առարկայ դէպի երկիրն է ընկնում, եթէ նա յե-

նարան չունի։ Մի բնական օրէնք է, որ արճիճը իր սովորական դրութեան մէջ միշտ կակուղ է և ծանր, այնինչ կայծքարը կարծր և կոտրուող է, որովհետև փորձը սովորեցնում է, որ ծանր առարկաները առանց յենարանի միշտ դէպի երկիրն են ընկնում, որ արճիճը իր սովորական դրութեան մէջ կակուղ և կայծքարը միշտ կարծր է։

Մենք կարող ենք յիրաւի՝ բոլորը, որ մենք բնական առարկաների ոյժերի և յատկութիւնների ու բնական կարգերի մասին գիտենք—բնական օրէնքներ անուանել։ Բայց ցանկալի է չը մոռանալ, որ բնական օրէնքները բնական կարգերի պատճառները չեն, այլ մենք այդ օրէնքներով արտայայտում ենք միայն այն, ինչ որ մենք այդ կարգերի մասին փորձով գտել ենք։ Քարերը ընկնում են դէպի գետին ոչ թէ շնորհիւ վերոյիշեալ օրէնքի, ինչպէս շատ անգամ ասվում է, առանց մտածելու, այլ այդ օրէնքը արտայայտութիւն է մի փաստի, որը անխուսափելի հետևում է, հենց որ ծանր առարկաները երկրի մակերևոյթի վերայ ազատ շարժուել են կարողանում։

Բնական օրէնքները իրենց այդ յարաբերութեամբ նմանվում են այն օրէնքներին, որոնց մարդիկ սովոր են յօրինել իրենց փոխադարձ յարաբերութիւնների կարգի մասին, որպէս օրէնքներ կամ կանոններ։ Դոյութիւն ունեն օրէնքներ

վճարելու մասին, հարկերի մասին, օրէնքներ՝ գողութեան և սպանութեան դէմ։ Օրէնքը սակայն ոչ նրա պատճառն է, որ մի մարդ իր հարկը վճարում է, ոչ էլ նրա պատճառը, որ նա չի գողանում կամ սպանում։ Օրէնքը պարզապէս հաստատում է, թէ ինչ պիտի պատահի մի մարդու հետ, եթէ նա իր հարկերը չը վճարի, կամ գողութիւն անի, կամ թէ սպանութիւն գործի։ Պատճառը, որ նա իր հարկերը վճարում է, կամ եղեռնագործութիւնից հեռու է կենում, այն է (եթէ չը կայ մի ազնիւ դրդում), որ երկիւղ է կրում հետևանքից, իսկ երկիւղը ներգործութիւն է նրա հաւատի, որ նա ունի այդ օրէնքի որոշման մասին։ Մարդկային մի օրէնք ասում է մեզ, թէ ինչ կանէ մարդկային հասարակութիւնը յայտնի հանգամանքների ներքոյ. այնինչ մի բնական օրէնք մեզ ասում է, թէ ինչ կանէին բնական առարկաները յայտնի հանգամանքների ներքոյ։ Իւրաքանչիւրը դրանցից դիմելով մեր հասկացողութեան, սովորեցնում է մեզ, և չը նայած, որ նա մեր հասկացողութեան վերայ ներգործում է, մի սոսկ ձայն է կամ տառ։

Բայց որքան էլ մարդկային օրէնքների և բնական օրէնքների մէջ նմանութիւն լինեն, անկարելի է չը տեսնել նրանց մէջ էական զանազանութիւն։ Մարդկային օրէնքը ուղղում է իր հրամանները ըղձայող էակին, որը կարող է նրան

հակառակել կամ հետևել, նայած որն է նրան շահաւէտ, և օրէնքը չի դառնալ ոչինչ կամ պրօ, եթէ նա խախտուի։ Բնական օրէնքները, ընդհակառակը, հրամաններ չեն, այլ հաստատումներ, որոնք վերաբերում են բնութեան անփոփոխելի կարգին։ Բնական օրէնքի եղծման կամ բարձման մասին խօսելը՝ անմտութիւն կը լինէր։ Բոլորը, ինչ որ մենք սրանով ասել ուզենայինք, կը լինէր այն, որ որոշ հանգամանքների ներքոյ, օրէնքի՝ իր մէջ բովանդակած հաստատութիւնը ճշմարիտ չէ։ որից հետևում է այն ուղիղ եզրակացութիւնը, որ ոչ թէ բնութեան կարգն է ընդհատուած, այլ թէ մենք, այդ կարգը ապացուցանելու ժամանակ մի սխալ ենք գործել։ Բնական, ճշմարիտ օրէնքը մի ընդհանուր կանոն է, որ երբէք չի ենթարկվում բացառութիւնների։

Մարդկային օրէնքները մարդկային հասարակութիւնից դուրս ոչինչ նշանակութիւն չունեն։ Բնութեան օրէնքները արտայայտութիւն են բնութեան ընդհանուր ընթացքի, որի մի շատ աննշան մասն է կազմում մարդկային հասարակութիւնը։

10. ԲՆՈՒԹԵԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋՆՈՐԴ Է ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ։

Եթէ ոչինչ դիպուածով չի պատահում, այլ ամեն ինչ բնութեան մէջ որոշ կարգի է հետևում, եւ եթէ բնութեան օրէնքները պարզ կերպով արտայայտում են այն, ինչ որ մենք բնութեան կարգի մասին փորձով գտել ենք, ապա մեզ համար շատ կարևոր է ծանօթանալ՝ որքան կարելի է՝ բազմաթիւ բնական օրէնքների հետ, որպէս զի մեր վերաբերութիւններին նրանց համեմատ ուղղութիւն տանք։

Իւրաքանչիւր մարդ, որ փորձել ուզենար մի երկրում ապրել, որի օրէնքների հետ ծանօթ չէ, շուտով անախորժութիւնների պիտի ենթարկուէր, և եթէ նա պատժուէր, գերի բռնուէր, մինչև անգամ մահուան դատապարտուէր, ապա խոհեմ մարդիկը հաւանական է կասէին—նա ինքը ենթարկեց իրան այդ վիճակին, իր անխոհեմութեան պատճառով։

Այդպէս էլ իւրաքանչիւրը, որ փորձում է մեր երկրի վերայ ապրել, առանց ուշադրութիւն դարձնելու բնական օրէնքների վերայ,—շատ կարճ ժամանակ կը ապրի, որի մեծ մասն էլ

անանդորը կը անցնի, որովհետև բնական օրէնքի մարդկային օրէնքից տարբերվելու յատկանիշներից մէկն էլ այն է, որ առաջինը տեղի է ունենում ինքնակոչ և առանց դանդատի։ Ցիրաւի, ոչ ոք չէր կարող մինչև անգամ կէս օր ապրել, եթէ նա ուշադրութիւն չը դարձնէր գոնէ մի քանի բնական օրէնքների վերայ։ Եւ հազարաւոր մարդիկ մեռնում են, կամ վարում են մի թշուառ կեանք, որովհետև նրանք բաւականաչափ եռանդով չեն ուսումնասիրել բնութեան գիրքը։

Մենք արդէն տեսանք, որ բոլոր՝ արհեստի և գեղարուեստի գործածութիւնը կախուած է բնական առարկաների յատկութիւնների հետ ծանօթ լինելուց, որ մենք իւրացնում ենք և մշակում։ Եթէ մենք զուրկ ենք հնարաւորութիւնից, անմիջապէս ներգործութիւն ունենալ բնական հսկայական առարկաների վերայ, ընդհանուր պատճառների և ներգործութիւնների վերայ, սրանց հետևանքների վերայ, բայց և այնպէս կարող ենք խուսափել այն բոլորից, որը մեզ վնասել կարող էր, և օգտուել նրանից, որը մեզ օգուտ է բերում, եթէ միայն ոյժերի և յատկութիւնների մասին, իրողութիւնների սովորական ընթացքի մասին տեղեկութիւն ունենք։

Այսպէս օրինակ՝ մարդը կարող է—թէպէտ նա տարուայ եղանակների ընթացքի վերայ, բոյսերի աճման վերայ ազդեցութիւն չունի—ծանօթ լինել բնութեան կարգի հետ և նրա համեմատ ընթացք տալ սերմելու և հնձելու գործը։ Նա չէ կարող առիթ լինել քամիին փչելու, բայց երբ նա փչում է, կարող է նրա ծանօթ ոյժերից և յայտնի ուղղութիւնից նաւարկութեան համար կամ հողմաղացի համար օգուտ քաղել։ Նա չի կարող կայծակի առաջանալուն դիմադրել, բայց կարող է՝ շանթարգելի շնորհիւ անվնաս դաձնել, որի չինելը պահանջում է ծանօթ լինել էլեքտրական մի քանի օրէնքների հետ, որոնցից մէկն էլ կայծակն է։ Պատրաստ լինել, նշանակում է տեղեակ լինել, իսկ բնութեան օրէնքներին տեղեակ լինել, նշանակում է այն բոլորի համար պատրաստ լինել, որտեղից երևոյթը սպասելի է, եթէ մենք գործ ունենք բնական առարկաների հետ։

11. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՒՐԻՇ ԲԱՆ ՉԵՆ, ԵԹԷ ՈՉ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ՉԵՌՔ Է ԲԵՐՎՈՒՄ ԳԻՏՈՂՈՒԹԵԱՄԲ, ՓՈՐՁՈՎ ԵՒ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԵԱՄԲ։

Ոչ կարելի է մի սահման դնել իրերի սովորական հասկացողութեան և գիտական հասկացողութեան մէջ, ոչ էլ կարելի է սովորական

մտածման և գիտական մտածման մէջ մի սահման դնել։ Բոլոր հասկացողութիւնները իսկապէս զիտողութիւններ են, և ճիշտ եզրակացութիւնները—զիտական եզրակացութիւններ։ Դիտողութիւնների և փորձերի մեթոդը, որի շնորհիւ գիտութեան մէջ մեծ հետևանքներ է ձեռք բերուել, բոլորովին միևնոյնն է, որ ամեն օր իւրաքանչիւր մարդ գործադրում է, միայն թէ նա աւելի կատարելագործուած է և ճիշտ։ Եթէ մի երեխայ խաղալիք է ստանում, նա դիտում է նրա յատկութիւնները և նրանով փորձեր է անում։ Այդպէս էլ մենք շարունակ դիտողութիւններ և փորձեր ենք անում, մի կամ միւս առարկայի վերայ։

Նրանք, որոնք երբէք չեն փորձել ուշադրութեամբ դիտել, ի զարմանս իրանց կը գտնեն, որ այդ մի ծանր խնդիր է։ Հարիւր մարդկանց մէջ մէկը հազիւ թէ լինի, որը սովորական իրողութիւնը, թէ կուզ մօտաւոր ճշտութեամբ, նկարագրել կարողանայ։ Նա կամ մի բան աչքաթող կանի, որ յիրաւի տեղի է ունեցել և կարևոր է, կամ մի իրողութիւն կը հնարի և կը աւելացնի, որը իսկապէս չի դիտել, բայց որը անգիտակցաբար ընդունում է, թէ նա կատարուած պիտի լինի։ Եթէ պատահում է, որ դատարանում երկու ճշմարտախօս վկաներ միմեանց հակասում են, ապա սովորաբար բանից դուրս է գալիս, որ

մէկը կամ միւսը, բայց գուցէ երկուսն էլ, իրենց եզրակացութիւնները հանել են նրանից, ինչ որ նրանք տեսնել են կարծել, բայց ոչ նրանից, որը իսկապէս տեսել են։ Ա-ն երդվում է, որ Բ-ն իր գրպանից մի բան է գողացել։ Դուրս է գալիս, որ Ա-ն Բ-ին նկատեց իրենից անմիջապէս մօտում, երբ նա մի ձեռք իր գրպանում զգաց, և թէ՝ ոչ թէ Բ-ն էր գողը, այլ Գ-ն, որին Ա-ն ամենևին էլ չի տեսել։ Անվարժ դիտողները շփոթում են այն, ինչ որ նրանք տեսնել են կարծել, նրա հետ, ինչոր յիրաւի տեսել են։ Այդ շփոթումը լինում է աչքի ընկնելու չափ, և մինչև անգամ փորձուածները և ուշադիր դիտողներն էլ շարունակ վտանգի են ենթարկվում՝ նոյն տեսակ սխալների մէջ ընկնել։ Գիտական դիտողութիւնը այն է, որը թէ ճիշտ և թէ հիմնաւոր է, և թէ ազատ անգիտակից եզրակացութիւնից։

Փորձերը այն բոլորի դիտողութիւններն են, որոնք տեղի են ունենում, եթէ մենք դիտմամբ միաւորում ենք բնական առարկաները, բաժանում ենք, կամ որև է կերպով փոփոխում այն պայմանները, որոնց մէջ նրանք գոյութիւն ունեն։ Ուրեմն մի գիտական փորձ այն գիտական դիտողութիւնն է, որ անվում է արհեստական և մեզ կատարելապէս ծանօթ պայմանների ներքոյ։

Որ ջուրը երբեմն սառչում է, այդ մի շատ սովորական դիտողութիւն է։ Այդ դիտողութիւ-

նը կը լինի գիտնական, եթէ մենք ապացուցենք, թէ ինչպիսի պայմանների ներքոյ է ջուրը սառուցի փոխարկվում։ Ամենահասարակ փորձերը ցոյց են տալիս, որ փայտը ջրի վերայ լողում է։ Գիտնական փորձը ապացուցանում է, որ փայտը, երբ լողում է, իր ծանրութեան կշռին հաւասար ջուր է տեղհան անում։

Գիտական եզրակացութիւնը տարբերվում է սովորական մտածողութիւնից ուղիղ այնպէս, ինչպէս գիտական դիտողութիւնը և փորձը տարբերվում է սովորական դիտողութիւնից և փորձից։ Գիտական եզրակացութիւնը ձրդտում է դէպի ճշտութիւնը, և ճշտութեամբ եզրակացնելը նոյնքան դժուար է, որքան ճշտութեամբ դիտելը։

Գիտական եզրակացութեան ժամանակ առանձին առանձին դէպքերը դիտողութեան են ենթարկվում, ժողովվում են ընդհանուր կանոնները, և եթէ այդ կանոնները ապացուցվում են ապա, ինչպէս հենց առօրեայ կեանքում, եզրակացութիւններ են հանվում նրանցից։ Եթէ մի երեխայ ասում է թէ ընկոյզը պինդ է, որը նա տեսել և կծել է, ապա նա դրանից ընդհանուր եզրակացութիւն է հանել ընկոյզի մասին, և մի այնպիսի ձևով է մտածել, որ արուեստական արտայայտութեամբ, հնդուկցիան կարելի է ասել։ Եթէ նա այլևս չի փորձում ընկոյզը կծել, ապա

սրա պատճառը այն է որ նա, գիտակից թէ անգիտակից, մտածելու հակառակ ձևն է գործադրել, որ կոչվում է դեդուկցիան, այսինքն, նա ընդհանուր այն կանոնից, որ ընկոյզը իր պինդութեան պատճառով կծել չի լինում, մի եզրակացութիւն է հանել։

Մտածելու և եզրակացնելու գործողութիւնների մասին հիմնաւորապէս ուսուցանում է տրամաբանութիւնը, կամ լոգիկան։ Առայժմ բաւական է, եթէ մենք իմանանք, որ բնական օրէնքները բնական առարկաների սակարկող կանոններ են, որոնք ժողովվել են անթիւ դիտողութիւններով և փորձերով. կամ ուրիշ խօսքերով, նրանք այդ դիտողութիւնների և փորձերի ինդուկցիաներն են։

Գործնական և տեսական գիտութեան արդիւնքները արդասիք են դեդուկտիւ եղանակով մտածելու, ընդհանուր կանոնների մասին։

Այդպիսով գիտութիւնը և բնական (սովորական) հասկացողութիւնները միմեանց չեն հակասում, ինչպէս երբեմն ընդունվում է, այլ գիտութիւնը կատարելագործուած բնական հասկացողութիւնն է։ Գիտական եզրակացութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ հասարակ, բայց ուշի ուշով կատարուած սովորական եզրակացութիւնը։ Եւ սովորական գիտակցութիւնը դառնում է, շնորհիւ աւելի և աւելի կատարելագործութեան— գիտական գիտակցութիւն։

Սովորական գիտակցութիւնը ուրեմն մի ճանապարհ է դէպի գիտութիւնը։ Մենք պէտք է այդ գիտակցութիւնը մանրակրկիտ դիտողութեամբ և փորձերով ընդլայնենք և սովորենք՝ մեր հետազօտութիւնների արդիւնքները արտայայտել ընդհանուր կանոններով, կամ բնական օրէնքներով։ Վերջապէս մենք պէտք է սովորենք, այդ կանոններից պարզ եզրակացութիւններ հանել, և այդպիսով բնական երևոյթների խելացի բացատրութիւններին հասնել, որոնք բաւական համարուէին առաջնորդելու մեզ կեանքի մէջ։

---

24 եր. ներքևից երրորդ տող տպուած է հատուածներից:
Պետք է կարդալ . . . . . հարուածներից:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԷԿ.

Հասցէ.—Բաղու, Եղբ. Թառայեանի դրամատառանոցը—Ս. Ս-ին։

«Ազգային գրադարան»
NL0249942

188

5
И-11